

ՄԱՍԻՆՆԵՐԻ ԿԱՆՈՒՄԻՆԻ

Պարտիզոն	համար
Տարեկան	12 Ժր.
Վեցամսյան	6 "
Մյուսամսյան	15 "
Վեցամսյան	8 "
Ստորագրողի համար	3
Տարեկան	4.50

ՇԱՐՋՈՒՄ

H. R. Kalemcarian, Mechitharistengasse W. 4. Vienne

Նամակ եւ դրամ դրկեկ
Խմբագրութեան հաս-
ցիկն

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արտատպանի համար
անոթի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուկարիոյ համար
անոթի
(15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՒԻՆ. ՔԱՂՄՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐՏԱՐԱՆՈՒ ՉՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Գրութիւնք եւ չնկ տրուի

ՏԵՂԻ ԵՒ ՇՈՒՏԱՓՈՅԹ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Մեկուկէս Ժր. 19-ին Պարիզից հեռա-
գրութեան հետեւեալը.

Պարիզից հեռագրութեան շե-
նագրութեան թէ՛ Ռուս-Հայկական
սահմանագրութի չորքերէ հրամա-
նատար Բիկով սպանութեց. սպա-
նողը անյայտ է. յունիս 15ին Բի-
կովը հրապարակեց իր արձակուրդի
հրահրականները, չընա-
յիլով վերջինների սպիտակ զը-
րոյակ բարձրացնելուն:

Հայ հարաբարութիւնը շատ լաւ
է ինչպէ՛ս Բիկով կազմած գաղանին
որը սպանտ հայ կորիւններէ հետ
աւելի քան անարար վարվեց քան,
ամենարիւնէնուշտ քուրքը կամ
թուրքը.

Բիկովը նոյնիսկ ռուսական գա-
ղանութիւններէ մէջ արտասովոր
գաղանութեան օրինակը ստեղծե-
ցաւ ամբողջ քաղաքակիրթ աշ-
խարհին ու մամուլը զգուշացու-
արձանագրեց նրա քստմնեցու-
ցիչ մանրամասնութիւնները:

Ռուսական ազնիւ մամուլը շու-
րա՛մ մնաց իր պաշտօնական հայ-
րենիքի եղանակ բարձրարդու-
թեան հանդէպ, իսկ հարաւարտ
մամուլը ներկայացուցիչներէից
մինչ «նստօղջ» վերջիններս ստիպե-
վեցին ստանձնել իրենց քա-
ղաքակիրթ յորհրդով Ռուսաս-
տանի ճակատից աչք մտնողական
արագը քերտելու համար:

Հարկ երեսուն վարդի չափագո՛ծ
տարբերութեան գաղանութեան,
բարոյական բնութեան վեր տա-
նումը Բայց միթէ՛ ներկայ պա-
րագան ընդ, այդ տեսակ տմար-
դի քերտելու հանդէպ կրկ քաղա-
քական զգոյթական կարող է հայ-
րենիքը անհրաժեշտ քովագնել թէ՛
և հանգիստ անգամ «ն» Բիկովի
ստիպմանը ներկայէ՛ք նկարեւն
քով չէր որ Չըն պէտք է պեկա-
վարվել, զալ Մովսէսի քակն բնգ-
ականի որ քաղաքէն սարգար: Նպ-
սպանողին սպանեցա՛յ շաբաթով,
սուր բարձրացնողին սրով վար:

ձառքեց: Բիկովին սպանողի
բազուկը համարուի պետք է,
ինչպէս առ հասարակ բոլոր այն
բազուկները, որոնք ժողովրդի
վրէժխնդրութեան գոհացում են
տալիս ձեռքի մի հարածով ու
մի ահնթարթում:

Պարիզի քաղաքացիները զուլս աւելը
զայլերին. այնքան ծանր քեռ
զրին մեր վզին:

Ինչ շատ տարիներ առաջ ա-
ջիւ է մեր բանաստեղծը տեսնե-
լով հային ստրկութեան գերադ-
րական աստիճանին հասած:

Այսօր պէտք է սանքը.
Պարիզի քաղաքացիները զուլս
զեւք, այնքան էլ մենք նրանցից
կը յարգվե՛ք: Իրկովները, Բա-
գուստակները մի մի բորիներ
են, որոնց զուլս պէտք է շար-
դել: Մարդու կերպարանքով
գայլերին շարդելը արժանա-
պատուութիւն ունեցող ժողովրդ-
ների միակ միջոցն է նրանց դա-
զանութիւնները ոչնչացնելու և
զալիքների առջեւը առնելու հա-
մար, և այդ միջոցից երբէք չը
պէտք է հրաժարվել:

Հայերս ամէն ոտնձգութիւն և
ամեն տեսակ խնդրոտ սպասում
էինք ռուս կառավարութիւնից և
նրա պաշտօնեաներից: Բայց
չէինք սպասում որ այդ կառավա-
րութիւնը և իր պաշտօնեաները
թուրքի հետ գործ առնեցող և ի-
րենց անձնատուր եղող հայ հայ-
րենասէրների հետ այդքան լիբը
գաղանութեամբ կը վարվին:

Իրենք վարվում են այդպէս,
նոյն ձեռով պէտք է պատասխա-
նել: Բագուստակները եթէ մի քա-
նի տները առաջ իրեն արժանի
պատժին արժանանար, այնքան
զժրախտութիւնները չէ՛ք հան-
գելով Սուրմալուի և Բագուստակ
նախնորութիւնը և թրքան ժողովուրդը
զը հանդուրժեց այդ գողանիլի,
նա նախքան աւելի գողանացաւ:
Կան պատիժներ որոնք անմիջ-
պէս պէտք է տեղի ունենան ժո-
ղովրդի կողմից և ժողովուրդի այ-
պիսի երկրները և ուր պատժ
արժանի պաշտօնեաները քաջա՛յ

լիբում են բարձրագոյն իշխա-
նութիւնները: Թուրքիս և Ռու-
սիա այդ տեսակ երկրներէ շար-
քում են գտնվում: Ենթոյ օրէնք
չը կայ. իշխանների կամայակա-
նութիւնն է լծագաւորում: Բա-
մայական իշխանութեան գէ՛մը
ժողովուրդն էլ իր կամքը պէտք
է բուռն կերպով արտայայտել որ
պէս զի կարող լինի իր գոյու-
թեան տարրական իրաւունքները
պաշտպանել: Են իշխանութիւնը
որ ինքը անօրէնք է և անիշխա-
նական սրտեմով է կառավար-
վում, կարող է սանձահարվել մի
միայն բնակչութեան նոյնա-
նքման հարածներով:

«Ինչ կը ցանես այն կը հնձես»
ասում է մեր սուածը:
Ռուս և Թուրք կառավարու-
թիւնները անիշխանութիւն են
ցանած և այդ էլ պիտի հնձեն
իրերի և երեւոյթների իբր բը-
նական հետեւանք:

Անիշխանական իշխանութիւն
ներին հանդուրժող հպատակնե-
րը բացարձակ ոչխարներ են, և
ի հարկէ հայը՝ գոնէ այսօր, այլ-
եւս ոչխար լինելու տրամադիր չէ
և չը պէտք է լինի, ինչպէս ցոյց
է տալիս մեր ժողովրդի վերջին
երկու տարվան կեանքը իր բազ-
մութիւն փաստերով:

ՎԱՐՇՈ

Կ Ե Ն Օ Ս Գ Ր Ս Կ Ա Ն

ՎԱՂԱՐՇԱԿ ԲԱՆՉԱՍՐԵՆՆԵՐ

(Կայ ծ ա կ)

(«Միջին» միստր խմբի առաջնորդ)

Մշտի երկ, ծնւած 1875-ին, Տաս-
նու մէկ տարեկան հասակում թաղա-
վան դպրոցն աւարտելով, նա ու-
ղարկւում է Միացեալ Ընկր Մշոյ
ներքեւան վարժարանը, ուր ցոյց է
տալիս Վե՛ծ սերդէպի ուսումը. իր
խնդունակութեամբ սիրում է ուսու-
ցիչներին և աւարտումն արժանա-
նում է ոսկէ խաչ մրցանակի: Բայց
անա տարիներ անցնելով մի ուրիշ
մէր գալիս է բանիւն նրա ամբողջ է-
ութիւնը, — զէ ն քի տ էր ղ Ամէն
գարնան հրացանը ձեռքի՛ն նա մի քա-

նի անգամ պտոյտի էր գնում լեռնե-
րը, որսում էր, կամ վարժութիւն-
ներ էր անում: Այդ հասակում ար-
դէն ուժեղ, յաղթանաւ Վաղարշակը
մի քանի անգամ ընդհարումներ է ու-
նենում քրդերի ու թուրքերի հետ:
Մի անգամ ինքը միայնակ կուռում է
ուժ քրդերի գէ՛մ. երեքի գլուխն է
պատում մէկի թեւն է կտորում:
Քրդերը առում էին նրան և շարու-
նակ սպանում:

Մի օր որսորդութեան միջոցին էր,
որ մեր յաջը պատահամբ ծանօթա-
ցաւ Արարոյի ընկեր՝ Ալիզանցի
Լեւոնի հետ: Վերջինս ներշնչեց նրան
հայրենիքի թշնամիները զէ՛մ կուռու-
գողափայլ, որ այն ժամանակ փոք-
րաթիւ անհատների սեփականութիւն
էր միայն: Վաղարշակի շուրջը ամէն
ինչ դեռ մրափում էր և անգամ իր
ուսուցիչները բացարձակապէս ընդ-
դիմանում էին զէ՛նք կրելու նրա սո-
վորութեան: Մի օր Առաքելոց վան-
քից վերադարձին, հանդիպելով իր
դասատուներից երկուսին, փորձում
է սպանել նրանց, — ընկերը արգելք
է լինում: 1892-ին աւարտում է դպ-
րոցը և աւելի ազատ է զգում իրեն:
Նոյն տարւոյ նոյնմերին, եղբոր հետ
միասին ուխտի են գնում Սբ. Աղբիւ-
րի վանքը. Սաս գիւղի ուխտաւոր-
ների հետ, Գիւղից 2-3 ժամ հեռու,
անտառը մտած պահուն, յանկարծ
լոյս ընկաւ խութեցի Ըղզայ անուն
յայտնի աւազակ քերդը, իր երկու
ձառաներով, ժողովուրդը սոսկումից
ուզեց անմիջապէս ետ դառնալ, այն-
քան քրդի անունը սարսափ էր տա-
րածել ամէն տեղ: Տեսարանը սխուր
և վրդովեցուցիչ էր. — հարիւրաւոր
մարդիկ սոսկում էին երեքի առաջ:
Վաղարշակը չը կարողացաւ համբերել
և երկու ընկերներով դիմեց զէպի
քրդերը, որոնք այդ տեսնելով՝ փո-
խեցին ճանապարհը, Բայց նկատելով,
որ զինւած հայերը սպառնական հե-
տեւում են իրենց, քերդը աւազակը,
զէ՛ն ձգելով հրացանն ու գլխարկը,
եկաւ յարգանքով՝ բարեկեց տղանե-
րին, նստեց նրանց հետ, բարեկա-
մացաւ: Ուխտաւորների բազմու-
թիւնը շարած մնաց այդ անսովոր
տեսարանի տառա՛ւ... Քերդը ճանա-
պարհ դրեց նրանց մինչև վանքը,
նոյնիսկ հայերի պահանջի վրայ՝ յետ
բերեց մի մեցի հայից նոր կողպտած
իրեղենները: Չէնքի Հրաշագործ ազ-
դեցութիւնն է...

1893-ին համատեանի ձերբակալու-
մը և հետեւեալ տարւոյ Սասունի կը-
րիւններն ու ապտները աւելի արժար-
ծեցին Վաղարշակի մէջ կուռու տե-
չը: Մի ընկերոջ հետ՝ նա մի քանի

անգամ անաջող փորձեր արեց՝ ոչնչացնելու դասձան Տէր Բարսեղին և սաստիկ վշտացած էր. որ Դաշնակցութեան տէրութեանը եկան խնդիրն իրենց այդ փառքը:

Մեծ կոտորածները չըլանում վաղարշակ մէկն էր այն փոքրաթիւ երիտասարդներին, որոնք զէնքը ձեռքին միշտ պատրաստ էին մուտ պաշտպանելու իրենց և ժողովրդին: Մուշեղ և չըլակայ դիւղերը ընդամենը մի երկու տասնեակ զոհեր տարին: Թշնամին չ'տեսցաւ, կարծելով, թէ այնտեղ կայ մեծ քանակութեամբ զէնք ու կուռղ ուժեր:

«Դաշնակցութիւնը, իր ուժերի համեմատ, առաջ էր առնում երկրի մէջ «գործի պրոպագանդը», կազմակերպում էր զինատար ու զինավորած խմբեր՝ ժողովրդի պաշտպանութեան համար: Վաղարշակը մտաւ այդ խմբերից մէկի մէջ: Սուսերը կենդանի կապ էր պահպանում Սեբեհի հետ, իսկ սրա եղբրական մահից յետոյ, օժանդակում էր Տարօնի առեւծիցերցան ձագուկներին:

1900-ից Վաղարշակը իր ընկերներով անընդհատ յարաբերութեան մէջ էր Անդրանիկի և Սասունի հայրուկներին հետ, բաժանում էր նրանց վրէժներն ու ուրախութիւնները, կրած ձախարհութիւններն ու յաղթանակները...

Այդ բոլորի մասին նա մանրամասն տեղեկագիր ներկայացրեց «Դաշնակցութեան» վերջին Ընդհանուր Ժողովին — որ եկել էր իրրեւ պատգամաւոր, — պատմեց երկար, բերանացի կերպով, խմբերի և տասնամեայ յեղափոխական գործունէութեան ուշադրաւ, յուզիչ զբազները:

Առաջնայն վաղ քի նշանաւոր կուր նախաձեռնողներից և գլխաւոր մասնակցողներից մէկն էր Վաղարշակը: Սրան անհուն կսկիծով դիտում էր նա, թէ ինչպէս ժողովուրդը յուսահատութիւնից օրթօգոգտութեան դիրկէ էր դիմում, Հաւատափոխութեան, կամաւոր ու ակամայ պայքարացութեան համաճարակը հանդիսաւ չէր աւլինըրան և Անդրանիկի ու մի քանի ընկերների հետ վճռեցին ունէ է յանդուգն քաղով ցնցել մահացնող մըթ-

նորորտը: Անդրանիկի հետ միասին նա վարեց բանակցութիւնները, ձեւակերպեց տեղական յեղափոխականների նազազայն պահանջները, որոնք ժամանակին հրատարակեցին «Դրօշակի» և եւրոպական թերթերի մէջ: Ընթերցողը յիշում է այդ փոքրիկ, սրտառու զինպահերգութիւնը, որ մի բուռն հայ պատամբներ, ձմրան սառնամանիքներին վաճառում ամրանալով, կուռղով ու պաշարելով ի վերջոյ աղոթում են կտրել թշնամու շրթան և անյայտանալ զէպի լեռները...

Եւ այդպիսի շատ ուրիշ փորձութիւններից ձողպրեց մեր հերոսը, որպէս զի յետագայում արժանանալու էր փայլուն մի ճակատամարտի, որ նա մղեց սքանչելի արիւթիւմով և որը յաւերճացրեց նրա սիրելի զէնքը հայ յեղափոխական տարեգրութեան մէջ:

(Իրօշակ)

ՄԱՍՈՒԼԻ ԾԵՍՈՒԹԻՒՆ

(Քաղաքացիական Ծրագրի մասին)

«Տանկները, որ արդէն յոճախ քողարկում են եւրոպական Խիւրքիայի մէջ կատարող անցքերը — որպէս զի արեւմտեան Եւրոպայում յիմանան ճշմարտութիւնը — որքա՛ն աւելի յաճախ առնում են այդ՝ ասիական Խիւրքիայի անցքերի վերաբերմամբ, մանաւանդ այն անցքերի, որոնք տեղի են ունենում Հայաստանի լեռներում: Արդէն երկար ժամանակից ի վեր գալիս են այնտեղից լուրեր յեղափոխական շարժումների մասին, և մենք ինքներս շատ անգամ հրատարակել ենք տեղեկութիւններ մասնակի կոիւնքերի մասին, այնու սմանայնիւ դեռ ևս չկայ անցքերի մի ամբողջացած տեսութիւն: Երբեք մի մէջ հաստատած Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի հիւպատոսները այցելել են Մուշը, սակայն ուսուական, Ֆրանսիական և սնդիլական կառավարութիւնները մինչեւ օրս չեն հրատարակել իրենց տեղեկագրերը: Բայց քանի որ — ինչպէս հաղորդում է Կ. Պօլսի մեր իրա-

գեկ թղթակիցը — այնտեղի լաւատեղեկ չըլաններում սպասում են, սեպտեմբեր ամսուն, Հայաստանի մէջ մի աւելի մեծ յեղափոխական շարժում եւ քանի որ թուրք կառավարութիւնը դիմում է զինեորական նախազուշական միջոցներին ուստի զինեմադրաւթիւնը շուտով պիտի թողնէ իր ձեռնպահութիւնը եւ անհրաժեշտարար պիտի զբաղէ այն խրնդրով, որը մակեդոնականից նազ կարեւոր չէ:

Հայերի պահանջը ոչ այլ ինչ է, եթէ ոչ այն, ինչ նրանց իտասացւած է 26 տարի առաջ Իերլինի զաշնագրերը ստորագրող պետութիւններից, — մի տեսակ ինքնավարութիւն Տաճկաստանի հայկական նահանգների համար:

Այն ժամանակից, երբ հայերը յուսահատւած որ ոչ ոք չէ ուզում գոհացում տալ իրենց գանգատներին՝ մինչեւ իսկ Կ. Պօլսի մէջ գրմիցին բռնի գործողութիւնների — այն օրից ի վեր Արքիւլ Համբար անձնանկանապէս մի անյաղկելի գարշաւք է գգացել զէպի հայերը, և երբ խորհրդատուները չէին վարանի նոր փորձի առաջ հայկական վտանգը վերստին հետացնելու արեան գետերով: Եւրոպական զինանախարարութիւնը ձար պատասխանատուութիւն կը բարդէր իր վրայ, եթէ Բարլինի զաշնագրով ընդունւած յանձնառութիւնները ի կատար չածէր ևւ լոկ թուրքաց կառավարութեանը թողնէր՝ սովորական գազանային ձեւով վերջ գնելու հայերի ձգտումին՝ զէպի մի լաւագոյն վարչութիւն:

Հայերի իրձերն ու պահանջները անիրաւացի չեն դառնում նրանով, որ նրանց իրագործման համար աշխատում է մի յեղափոխական կազմակերպութիւն, քանի որ բուս երկրում հայերը հնարաւորութիւն չունեն իրենց ցանկութիւններին արտայայտութիւն աւելու: Այդ կազմակերպութիւնն է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որի կենտրոնական օրգանը «Դրօշակ» անունով լոյս է տեսնում Ժընէվում և որի ներկայացուցիչները գործում են ոչ միայն Տաճկահայաստանում, այլեւ կովկաս-

տում, Պարսկաստանում, նաեւ Ամերիկայում, Եգիպտոսում, Բալկանեան երկրներում ապրող հայերի մէջ: Յեղափոխական Դաշնակցութիւնը մեծ ժողովրդականութիւն է վաստակել իր անխնջ գործունէութեամբ, որով նա տասնեակնից տարուց ի վեր Քըրդերի եւ թիւրք պաշտօնեաների մըտական սպառնալիքներին ենթակայ հայերին զէնք է մատակարարել և փորձել է պետութիւնների միջամտութիւնը առաջ բերել խոստացած ռէֆորմները մոցնելու նպատակով: Երկրի ներսում կազմակերպութիւնը կենտրոնացրել է իր ուժերը գլխաւորապէս Սասունում որը դիտուում է իրրեւ միջնաբերդ Տաճկահայաստանի: Այդ հանգամանքը պարզում է, թէ ինչպէս հայերը այնքան յամառութեամբ ձգտում են պաշտպանել այն լեռնավայրը թիւրք կառավարութեան դէմ, որը շարունակ փորձեր է արել այն լեռնոտու կրտսնկարի շրջանում գորանոցներ շինել: Այնտեղ է որ երեք տարուց ի վեր՝ բանակ էր հաստատել շատ յիշատակաւ Արքանիկը, Դաշնակցութեան գլխաւոր ներկայացուցիչը: Սակայն նրա գործը այնքան ուժեղ չէ, որ յարձակողական զիւրք բէ, բայց եւ այնպէս նա շատ անգամ մեծ յաջողութեամբ յետէ մղել թիւրքաց զօրքերի յարձակումները: Նա, ի հարկէ, չկարողացաւ արգիլել, որ Չէքի փաշայի առաջնորդութեամբ թիւրք զինորդները միացած աւազակաբարոյ զրդերի հետ գահավիժէին անզէն հայերի — կանանց, երեխաների ու ձերբեր վրայ եւ կոտորէին: Դա եղաւ ապրիլում:

Այնուհետեւ դարձեալ բազմաթիւ ընդհարումներ առաջացան, բայց թուում է թէ զինորդները այլեւս ունիմ չունեն վարագութիւններ ցրածելու: Հայերը Մուշում ներկայացրել են Ֆրանսիայի Ռուսաստանի և Անգլիայի հիւպատոսներին այն հիմնական պահանջները, որոնց իրագործումը պիտի իաղադրացնէր երկիրը: Հիւպատոսները ուղարկել են այդ ռէֆորմներ իր առաջարկները Կ. Պօլսի զեպաններին:

Չպիտի կարողանան պնդել, թէ այդ ցանկութիւնները անիրաւացի

ԻՆՏԻՆԵՐԸ (3)

(Պատկեր Բախուի կեանքից)

— Ձեր բանկն եմ խել. ձեր պահանջով, դուք ասացիք վայ յաղթը վողին. բնական որ ես չէի ցտակալ այդ վային արժանանալ Իւլիա Իվանովնա: Լաւ հիմա խմենք, վերջը կը հաշտվենք. երկրորդ անգամ երբ բանկ բռնէք, աւելի փակասիրտ կը լինեմ, եթէ այդպէս է ձեզ հաճելի: Ես չէի կարծում թէ ձեզ վրա կարող էր այդչափ ազդել:

— Ոչ, ոչ, Բարու թով, ժպտալով առարկեց Իւլիա Իվանովնան, եւ ազդելով չեմ. յամենայն զէպի վատ չեմ տրամադրված զէպի ձեզ. ճիշդ է, աւելի լաւ կը լինէր որ ես չը պարտ վէի, իմ թուղթը ձերինից բարձր լինէր, բայց ես ձեզից վրէժս կը լուծեմ, ես էլ ձեր բանկը պէտք է խըղծի: որչափ էլ որ նա մեծ գումար լինի, Բաւ է, տղերքը սպասում են, ես ձեզ հրամայում եմ բաժանները լցնել տալ, Բարու թով, ուրեմն առաջ:

Բողբուն էլ սեղանին մտնեցան, ու

Բարու թովը չըբ վերցնելով բարձրաձայն յայտարարեց.

— Իւլիա Իվանովնայի հրամանով բոլորից էլ, առանց բացառութեան առաջարկում եմ բաժանները վերցնել եւ մինչեւ որ առաջին օրինակը Իւլիա Իվանովնան չը տայ իր բաժակը պարպելու, ոչ ոք ոչինչ չը խմի:

— Ետ լաւ, շատ լաւ, առաջինը ես եմ խում, մաաը շարժելով սանց Իւլիա Իվանովնան եւ լցված գաւաթը դատարկեց, հերհեր առանց բացառութեան հետեւեցին Իւլիա Իվանովնային:

— Մէկ էլ պէտք է խմել, մէկ էլ, ափոս որ Սեթրակովը այտեղ չէ, նա միայն գիտէ մարդկանց լաւ խըմնցել տալ:

Իսկապէս ո՛ւր է նա, ես նրան իմացրել էի որ այստեղ պէտք է գամ, եւ մինչեւ հիմա էլ սպասում էի որ կը գայ, բայց չէ երեւում, եւ արդէն ուշ է:

— Չարմանալի եմ ճմարիտ:

նից այլեւ ձեզից, ամբողջ Բաքուից, կովկասից, իր պաշտօնից:

Բարու թովը հեգնութիւնը, աւած տեղեկութիւնները ճեղգնեմէ փոխուցին Իւլիա Իվանովնայի դէմքի արտայայտութիւնը. նա խոժոռվեց, գոյն տըւաւ գոյն առաւ Բարու թովը այդ փոփոխութիւնը նկատելով Իւլիա Իվանովնայի մէջ, աւելի հեգնելով շարունակեց.

— Միշտ այդպէս է լինում Իւլիա Իվանովնա, դուք ինչպէս երեւում է այսօր աւելի Սեթրակովի համար էիք եկել, իսկ նա չը կայ. ի հարկէ ուրիշ ժամանակ նա էլ միշտ ձեզ համար էր գալիս. բայց այսօր ձեր ներկայութիւնն էլ չէ կարողացել նրան մեր շրջանի մէջ բերել, ուրեմն մի լուրջ պատճառ ունի, եւ այդ պատճառը գտնելու ճիգերը դուք պէտք է թափէք, որովհետեւ Սեթրակովի բացակայութիւնը մեր տրամադրութիւնների վրա բողբոմին չէ ազդում:

— Էհ, շատ ես խուսում, Բարու թով, նրա բացակայութիւնը ինձ վրա էլ չէ ազդում, ուրեմն բաժանները լցնելու սուր. ահա իմ բաժակը ես լցնում եմ իմ ձեռքով. էլ չեմ ուզում ձեր

ժառայութիւնը որովհետեւ այսօր դուք տրամադրված էք ինձ բարկացնել:

Ուրեմն խմենք, Սարգիսով բաժանները զարկենք իրար:

Ու բաժանները զարկեցին իրար, բերանները շարժեցին, խորհրդաւոր ժպիտներ փոխանակեցին ակնարկներ նետելով Իւլիա Իվանովնայի և Սարգիսովի կողմը:

— Էհ սեսա՛ք, Իւլիա Իվանովնա իմ խօսքերը ի գուր չանցան, նրանք որոշեցին թէ Սեթրակովի բացակայութեան միջոցին նրա տեղը ձեզ ժողով պէտք է գրաւէ: Ու ես շատ ուրախ եմ որ այդպէս է վերքը բուժված է. մեր երկկողմը չը պէտք է փչանայ:

— Չէ, չէ չը պէտք է փչանայ, առարկեց Իւլիա Իվանովնան, ընդհակառակը աւելի զարթոյթ և ուրախ պէտք է լինի. ինչան դրա մի մի հատ էլ խմենք, և թող վերջինը լինի, մինչեւ ընթրիքը գալու:

— Կեցցէ Իւլիա Իվանովնա, կեցցէ երեկոթի թագուհին խմենք իր կենացը, միտրեան գոռեցին հիւրերը: Բարու թովը չը կարողացաւ իր նպատակին հասնել, Իւլիա Իվանովնան

են. նրանցից մի-քանիսը. օրինակ նրանք. որոնք վերաբերում են երկրի մէջ հսկողներ նշանակելուն, զաղթականների վերադարձին, եւրոպական հսկողութեան—համապատասխանում են նոյնիսկ այն պահանջներին, որ պետութիւնները դրել են Մակեդոնիայի նկատմամբ:

Բայց եւ այնպէս հայերը քիչ յոյս ունեն չուսով իրագործած տեսնելու իրենց ցանկութիւնները: Անգլիան, Ֆրանսիան եւ Իտալիան հաստատապէս հակառակ կը լինէին պնդել հայերի առջակած ուժֆորմների վրայ, սակայն Ռուսաստանը, որ երբէք լրջօրէն չէ ցանկացել ամբողջութեամբ տիրապետութիւնը ուժֆորմների իրագործումով—այսօր բացարձակապէս թշնամական դիրք ունի դէպի հայերը: Ռուս կառավարութիւնը ոչ միայն իր երկրի մէջ է կատարել կընդունում հայերի գէտ, այլ նա մինչեւ իսկ—ինչպէս հաղորդեցինք մի քանի օր առաջ—Թիւրքերի օգնութեան է հասցրել ոուս զինուորներին՝ մի հայ ասպատակային խումբ ցըրելու միջոցին:

Չնայած այդ բոլորին, չպէտք է զբոսանալ, եթէ հայերը դարձեալ եւ դարձեալ փորձեր անեն՝ եւրոպական պետութիւններին միջամտութիւն առաջ բերելու: Պայմանները Հայաստանի մէջ ուղղակի անտանելի են, եւ Մակեդոնիայի օրինակը կարող է միայն իրախուսել ներդրութիւն ունենալ հայերի վրայ»:

«Իրոյակ»

ՌՈՒՍԻ ՄԸ ԿԱՐՄԻՔԸ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

() 0 ()

Կերմանիոյ Շտուտհարտ քաղաքին մէջ հրատարակուող «Տէնուշ Ռէվիւ» ամսաթերթին մէջ ուս նշանաւոր պետական մարդ մը Ռուսիոյ և Ճարձնիոյ միջեւ ըլլալիք հաշտութեան մասին հետեւեալը կըսէ:

«Ամբողջ աշխարհը գիտէ թէ պատերազմը սկսողը Ճարձնիան

եղաւ: Այս անգիծելի փաստէն կը եկրակայուի թէ քանի որ Ճարձնիան սկսած է պատերազմը, ան ալ պիտի վերջացնէ: Ուրիշ խօսքով Ճարձնիան պիտի հաշտութիւն ուզէ և ատոր հասնելու համար առաջին քայլերը ընէ: Որ Ռուսիան ինքը առաջինը հաշտութեան առաջարկներ չը պիտի ընէ, ագ կը փաստեն անոր ամբողջ պատմութիւնը, անցեալը և ապագան: Ռուսիան պիտի կռուի մինչեւ այն վայրկեանը, ուր թշնամին ինքը հաշտութիւն ուզէ. ես կրնամ ձեզի վստահացունել որ 140 միլիոն մարդոց մէջ չը կայ մէկը որ ուրիշ կերպ մտածէ. այդ համոզումը պալատէն մինչեւ վերջին խրճիթը անդրդվելի է, ագ մասին կը վկայէ և ժողովուրդին անհանգստութիւնը, որը մեծ հաւատք ունի ապագային վրայ հակառակ մեր նաւատորմիդին և զօրաբանակին պարտութիւններուն:

Եթէ հաշտութիւնը առաջարկուները ճարձնացիք պիտի ըլլան, ուրեմն և հասկանալի է թէ քանի որ ճարձնացիք կը լողան յաղթութիւններու մէջ, լրջօրէն չը պիտի մտածեն հաշտութեան մասին: Միւս կողմէն քանի որ ճարձնացիք Մանչուրիայէ ուսաց զօրքը բոլորովին քշած չեն անոնց կառավարութիւնը չը պիտի համարձակի հաշտութեան առաջարկներ ընել: Իսկ Թեթերսպուրի մէջ հաշտութեան ուէտ առաջարկները մտիկ ըլլալու համար, պէտք է որ անոնք ընդունելի ըլլան. իսկ այդ կարելի է միայն այն ատեն երբ Ռուսիան լիակատար գոհացում կընդունի յանկարծակի յունվարի մէջ դաւաճանօ-

րէն տեղի ունեցած յարձակման համար և բացի այդ երաշխաւորութիւն ստանալ որ խողաղութիւնը այլեւս ոչ ոք պիտի աւազակային ձեւով չը պիտի խանդարուի:

Ճարձնիան կրնայ խողաղ ճանապարհի մէջ մտնուլ այն ատեն, երբ գիտակցի պատերազմին իրեն համար վստահար ըլլալը: Այդ գիտակցութիւնը այս ժամուս գոյութիւն չունի. ուրեմն պատերազմը դեռ պիտի շարունակուի:

Ռուսիոյ մէջ գեռ ոչ ոք հաշտութեան մասին կը մտածէ, իսկ Ճարձնիոյ մէջ կը ձեռվին այն պայմանները որոնք պիտի առաջարկուին Ռուսիոյ, Ըստ ճարձնական «Կայտ» թերթին, Ճարձնիոյ պահանջները հետեւեալները են:

1. Մանչուրիոյ երկաթուղիի գծին յանձնումը Ճարձնիայի:

2. Մանչուրիոյ վերադարձումը Չինաստանի, մինչեւ ուէ միջագետքի առթիւ ճարձնացիք կրնին դրաւենալ... 3. յիբեքիան մինչ Լէնա գետը (Թորթ Սրթուր, Ճալնիյ և Սախալին միասին) կամանտօրեան կզդինքը կամ շատկան պիտի յայնձնուի ճարձնի նաեւ մէկ միոն ուրբի տուգանք...:

Ինչպէս կը տեսնանք Ճարձնիան գեռ արջը չըսպանած, կաշին կը բաժնէ...

Եթէ հարցնէք զիս թէ Ճարձնիան երբ իրաւունք ունի այդ տեսակ պայմաններ առաջարկելու, ես կը պատասխանեմ—երբ ճարձնական զօրքը Մոսկուա մըտնի: Ատկէ առաջ այդ առաջարկները անմիտ են...

Ճարձնացիները միայն Մոսկու-

ուսի մէջ կրնան մեզի հաշտութիւն թելագրել, և ատոր մէջ կը կայանայ այս պատերազմին սարսափելիութիւնը: Ան կարող է սեւել տարի մը, երկուս, երեք չորս և Ռուսիա չի զիջանիր:

Թորթ Սրթուրի անկումը իսկ չը պիտի տապալէ:

Կապաքական աշխարհը իր գընահատումներու միջոցին զեկավարիչ հիմքը չը պիտի մոռնայ: Ռուսիան չի կրնար հաշտութիւն ընդունիլ Ճարձնի ձեռքէն, եթէ չի ուզեր կորսնցնել իր զօրութիւնը և իր քաղաքական դիրքը:

Այս տեսակէտով բոլոր խողաղ միջամտութիւնները վստահար են ընդհանուր խողաղութեան համար: Այս պատերազմը որ այնքան դաւաճանօրէն սկսուած է, պիտի վերջանայ Ճարձնիայի լիակատար խորտակումով:

ԲԱԺԱՆՊՐԻՆԵՐՈՒՆ

Տարին վերջանալու մօտ է և մեր բաժանորդներէն շատերը դեռ իրենց բաժանորդները չեն վճարած:

Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարտք ունին, ինչպէս կեղևի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթը տէմքը ձրի կառնենք, գրաշարները ու սպարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր, այլ օգով կապրինք:

Ի՞նչ մը ազնիւ ըլլալու են մեր չը վճարող բաժանորդները, մանաւանդ անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին թերթ չենք զրկեր մարդու: Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական զգացումէն զուրկ չը պիտի ըլլայ:

Խմբագրութիւն



գիտէ աչքին երեւցած փոքրիկ ամպերին կարեւորութիւն չը տալ:

—Ամպ չը կայ, ոչ մի ամպ, սովորութեան խնդիր է միայն, ջերմօրէն ընդմիջեց իւրիա Իվանովիան. միշտ սովոր էի Սեթրաքովին այստեղ տեսնել, և մտնանա՞ր այսօր էլ անձամբ իրեն ասացի, և բացակայութիւնը տարօրինակ երեւաց. ես կասկածեցի թէ Բարութովի հետ մի ընդհարում է ունեցել, որովհետեւ իմ այստեղ գալս յայտնած միջոցին շատ մտիկ և անորոշ կերպով պատասխանեց, ես չեմ սիրում էրք իմ բարեկամներին մէջ, մանաւանդ ձեզ նման հրաշալի աղայոց մէջ ընդհարումներ են տեղի ունենում:

—Ոչ, ոչ հանդիսա եղէք. ընդհարում և այլ ուրիշ այդ տեսակ լուսեր չը կան: Պարզապէս չէ եկել, որովհետեւ քաղաքից բացակայ է միջամտեց Բարութովը:

Վերջապէս բաւ է այդ խնդրով ըզբաղվել, գործերս շարունակեմք, ասեց արիկին Իւրիան եւ գնաց իր աթոռը գրաւեց:

Խողաղագիւրը հետեւեցին երկկոյթի թաղուհու օրինակին:

—Է՛հ, հիմա ո՞վ է ուզում բանկ

րունել հարցրեց իւրիա Իվանովիան:

—Ես, ես հապճեպով պատասխանեց Բարութովը, ես այսօր թէ տրամադրված եմ ուրիշների բանկերը խլել եւ թէ ի՞նչս իմ բանկերը ողջ առողջ ազատել, այս յափշտակիչների ձեռքից:

Ես բանկուսու դնում եմ հինգ հարիւր ռուբլի:

—Ոչ, ոչ այդ մեծ գումար է. երեք կնիւն համար հարկաւոր է 1500, Ոչ ոք չի համարձակի այդտեսակ խոչոր բանկի վրայ միանգամից յարձակում գործել, առարկեցին մի քանիսը:

—Չէնք ես էլ այդ պատճառով է որ մի քիչ խոչոր գումար եմ դնում. միանգամից չէք կարող վերցնել, կարող էք մաս մաս վերցնել. երեք կնիւն միջոցին կարող էք ընկերովի գնալ. ես այդ տեսակ դիրքութիւններ կը տամ ձեզ, Բայց եթէ չը համաձայնէք, ես էլ բանկ չեմ բռնի, ոչ միանգամ:

—Լաւ, լաւ համաձայն ենք. դիր հինգ հարիւր ռուբլին. քո փողերը անուշ են. քեզ պէտք է պլոկել, որ դու մի քիչ համեստ լինես:

—Պլոկեցէք, ես ինձ ձեր տրամադ-

րութեան տակ եմ դնում, այս խօսքերի հետ Բարութովը թղթապանակից հանեց 5 հատ հարիւր ռուբլիանոց թղթադրամներ եւ դրեց սեղանի վրայ. ծխածանազայն թղթերը, ճըրագները լոյսի տակ մի ստանձին հրապուրանք ստացան խողաղոյնները սկսեցին Բարութովին շտապեցնել որ թղթերը բաժնէ:

—Դէ մի քիչ հանգիստ եղէք. ինչ կայ որ, ապիս եմ թղթերը:

Թղթերը բաժանվեցին. Իւրիա Իվանովիան որ ուզող Բարութովի գիմացն էր նստած, կեղրոնացաւ իր թղթերի վրայ. նրա դէմքը վայրկեանապէս արուբերվող որոշումի արտայայտութիւնը ընդունեց. վերջապէս վճարողականի վերածվեց:

Մինչեւ հերթը իրեն հասնելը, ձախ կողմից մի քանի հօգի հինգով, տասով տարվեցին եւ աւելցրին Բարութովի բանկի վրայ: Բանկի գումարը մօտ վեց հարիւրի հասաւ. Իւրիա Իվանովիան չըթուեցներ սեղանը, ու մի փորձող ակնարկ նետեց Բարութովի երեսին:

—Ի՞նչ էք նայում, ինչպէս երեւում է լաւ թղթեր ունէք. սակայն խորհուրդ չեմ տալիս մեծ գումար նը-

շանակել. կարվէք. հաւատացնում եմ ձեզ. նախազգացումը ինձ այդպէս է ազդարարում:

—Ամբողջ բանկը, չոր ու ոչ այնքան բարձր ձայնով արտասանեց իւրիա Իվանովիան եւ իր երեք թղթերը վար նետեց, Երեք ասուն էին: Լոտի թիւը տիրեց սեղանի վրայ, թղթերը հրաշալի էին. հաղարներով գումար կարելի էր սխկի ենթարկել:

Բարութովը առանց այդ մեծ թղթերի առջեւ այլայլվելու իր թուղթը բացեց և գորսս եկաւ ագռաւի երկուսնոցը, որի ասուն բացակայում էր Իւրիա Իվանովիայի թղթերի մէջ:

—Վայ դու անիծեալ. բացական չից Իւրիա Իվանովիան եւ սկսեց դըրամները համբել մի քիչ դողացող ձեռքերով:

—Ես մեղաւոր չեմ, Իւրիա Իվանովիա, ձեզ նախազգուշացրի, բայց ինձ չը լսեցիք:

(Շարունակելի)



